Հաշվետվություն

2022 թվականի օգոստոսի 1-ից 5-ը Միավորված ազգերի կազմակերպություն Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արման Պետրոսյան,
   Վահագն Մուրադյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ, Գեոմատիկայի կենտրոնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   ԱՄՆ, Նյու Յորք, 2022 թվականի օգոստոսի 1-ից 5-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Միավորված ազգերի կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

- Մասնակցություն ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի (UN GGIM) 12-րդ նստաշրջանին,
- Նոր գործընկերային հարաբերությունների հաստատում ոլորտային միջազգային կազմակերպությունների և տարբեր երկրների պաշտոնական ներկայացուցիչների հետ,
- Մասնագիտական բնագավառում միջազգային փորձի փոխանակում:

Քննարկված թեմաները.

Հանդիպման 3 օրերի ընթացքում ներկայացվեցին հետևյալ թեմաները.

- ✓ Երկրատարածական տվյալների կառավարման ամրապնդում,
- ✓ Տարածաշրջանային և թեմատիկ խմբերի ներդրումը երկրատարածական տվյալների կառավարմանն առնչվող հարցերում,
- ✓ Ապագա երկրատարածական տեղեկատվության էկոհամակարգի որոշումը,
- ✓ Ինտեգրված երկրատարածական տվյալների շրջանակ,
- ✓ Համաշխարհային գեոդեզիական ցանց,
- ✓ Երկրատարածական տվյալների կիրառումը կայուն զարգացման նպատակով,
- ✓ Երկրատարածական, վիճակագրական ու ոլորտին առնչվող տվյալների

ինտեգրում,

- ✓ Երկրատարածական տվյալների կիրառումը հողօգտագործման և հողային կառավարման նպատակով,
- ✓ Ծովային երկրատարածական տվյալներ,
- ✓ Երկրատարածական տվյալները և աղետներին արձագանքման մեխանիզմը,
- ✓ Իրավական և քաղաքական շրջանակներ, որոնք ներառում են երկրատարածական տվյալների ճշգրտությանն առնչվող խնդիրներ,
- ✓ Երկրատարածական տվյալների կառավարմամբ զբաղվող համաշխարհային հասարակության համար ստանդարտների որոշում և կիրառում,
- ✓ Համագործակցություն ՄԱԿ-ի փորձագետների խմբի հետ աշխարհագրական անվանումների շրջանակում:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Օգոստոսի 1-ին ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման տարածաշրջանային կոմիտեների աշխատանքային հանդիպումներին և «Երկրատարածական տեղեկատվության կապը Երկրի հեռազննման հետ» խորագիրը կրող մասնագիտական քննարկմանը: Օգոստոսի 5-ին մասնակցել են նաև «Երկրատարածական տվյալները և աղետներին արձագանքման մեխանիզմ» աշխատանքային խմբի փակ հանդիպմանը, որին որպես անդամակցող երկիր՝ ներգրավված է Հայաստանը: Հանդիպման ընթացքում ներկայացվեց ու քննարկվեց աղետների վիզուալիզացման և մշտադիտարկման գլոբալ պորտալը:

Օգոստոսի 3-ից 5-ի ընթացքում ներկայացված թեմաների վերաբերյալ տեղի ունեցան քննարկումներ, մասնակից երկրներն ու կազմակերպությունները ներկայացրին իրենց տեսակետներն ու առաջարկությունները:

ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները առանձին հանդիպումներ են ունեցել Գլոբալ երկրի հեռազննման խմբի (GEO) և Եվրոգեոգրաֆիքս (EuroGeographics) միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնց հետ քննարկվել են հետագա համագործակցության հնարավորությունները: Հանդիպել են նաև ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի 12-րդ նստաշրջանի համանախագահի, «UN_GGIM»-ի եվրոպական տարածաշրջանի գործադիր կոմիտեի քարտուղարի, ինչպես նաև «UN_GGIM»-ի գեոդեզիայի ենթահանձնաժողովի համանախագահի հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի «UN_GGIM» 12-րդ նստաշրջանի ավարտին ամփոփ հաշվետվության մեջ հստակեցվեցին հետագա անելիքները և ապագայի տեսլականը, ինչպես նաև 2023 թվականի 13-րդ նստաշրջանի օրակարգը: Մասնավորապես որոշվեց շարունակել Գերմանիայի Բոնն քաղաքում Գլոբալ գեոդեզիական գերազանցության կենտրոնի հիմնադրման աշխատանքները, աջակցել հոկտեմբերի 10-14-ը Հնդկաստանի Հայդարաբադ քաղաքում կայանալիք ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության երկրորդ կոնգրեսի կայացմանը:

Քննարկվել է «գեոդեզիայի ենթահանձնաժողովին» և «ինտեգրված երկրատարածական տվյալների շրջանակի» աշխատանքային խմբին Հայաստանի Հանրապետության լիիրավ անդամակցելու հարցը, արդյունքում ձեռք է բերվել նախնական համաձայնություն աշխատանքները սկսելու համար: Այդ խմբերում ակտիվ մասնակցությունը, հնարավորություն է ընձեռելու մասնակից դառնալու երկրատարածական տվյալների կառավարման համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներին, ինչպես նաև տարբեր երկրների լավագույն փորձի և հմտությունների փոխանակման, մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպմանը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.**

«Ինտեգրված երկրատարածական տվյալների շրջանակ» աշխատանքային խմբի կողմից ներկայացված ազգային մակարդակում գործողությունների ծրագրի իրականացում ՀՀ-ում «UNGGIM»-ի աջակցությամբ: Էլեկտրոնային նամակագրության միջոցով իրականացվել է Հայաստանի անդամակցության հարցի քննարկումը տարբեր մասնագիտական աշխատանքային խմբերում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ քննարկված թեմաները և ձեռք բերված նախնական պայմանավորվածություններն ու վերապատրաստումները կնպաստեն ՀՀ-ում ազգային երկրատարածական տվյալների արդյունավետ կառավարմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արման Պետրոսյան

Վահագն Մուրադյան

09.08.2022 թ.